Կայնի, կաքավն ածի

Կայնի, կաքավն ածի, կայնի, կաքավն ածի,
Կայնի, կաքավն ածի, կառնիմ, ուրախացի:

Կաքավ թռավ քարին,
Կայնի, կաքավն ածի,
Արև դիպավ սարին,
Կառնիմ, ուրախացի:

Տանրս տակը կա նրռնի,
Կայնի, կաքավն ածի,
Բարձ բերեմ, դու կրռնի:
Կառնիմ, ուրախացի:

Կայնի, կաքավն ածի, կայնի, կաքավն ածի,
Կայնի, կաքավն ածի, կառնիմ, ուրախացի:

Գութանը հոլ ա, հոլ ա,
Կայնի, կաքավն ածի,
Գութանի տակը քոլ ա,
Կառնիմ, ուրախացի:

Քանի զժություն էնես,
Կայնի, կաքավն ածի,
Քեզի առնողը ով է,
Կառնիմ, ուրախացի:

Կայնի, կաքավն ածի, կայնի, կաքավն ածի,
Կայնի, կաքավն ածի, կառնիմ, ուրախացի:

Էրնեկ ես ծառ էղնեի,
Կայնի, կաքավն ածի,
Ձեր դռանը բուսնեի,
Կառնեմ, ուրախացի:

Խնձոր ունիմ խաձած է,
Կայնի, կաքավն ածի,
Ձորս բոլորն արծաթած է,
Կառնեմ, ուրախացի:

Կայնի, կաքավն ածի, կայնի, կաքավն ածի,
Կայնի, կաքավն ածի, կառնեմ, ուրախացի: